Հաստատում եմ՝
ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի ռեկտոր Խ.Ղազեյան
«06» 12 2022թ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի 2022թ. դեկտեմբերի 1-ին կայացած նիստի № 10 արձանագրությունից

Մասնակիցներ

Ա. Եզեկյան	-	իրավագիտության ամբիոնի վարիչ
Վ. Ստեփանյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գ. Դանիելյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հ.Հակոբյան	-	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թ.Շաքարյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Լ.Հակոբյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ.Մկրտչյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու
Ա.Ասատրյան	-	իրավաբանական գիտությունների թեկնածու
Գ.Նավասարդյան	-	ամբիոնի դասախոս
Ա.Հովհաննիսյան	-	նիստի քարտուղար

1. Լսեցին

ԺԲ.00.02 («Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում») մասնագիտությամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի՝ **«Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում»** թեկնածուական ատենախոսության վերաբերյալ որպես առաջատար կազմակերպություն կարծիք ներկայացնելու հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Ամբիոնի վարիչը նշեց, որ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Թ. Շաքարյանը ծանոթացել է ատենախոսությանը, կարծիք է տվել, համաձայն որի՝ քննարկվող ատենախոսությունը կատարված է որոշակի խորությամբ և ունի հիմնավորվածության որոշակի

մակարդակ, ինչի հիման վրա ՀՀ պետական կառավարման ակադեմիան, որպես առաջատար կազմակերպություն, կարծիք է կազմել, որը ներկայացվում է ձեր քննարկմանը:

Ելույթ ունեցան՝

Ի.գ.դ.,պրոֆ. Գ.Դանիելյանը, ի.գ.թ., դոց. Ա. Եզեկյանը, ի.գ.թ.,դոց. Թ.Շաքարյանը և ի.գ.թ. Ա.Ասատրյանը: Նրանք կատարեցին առաջարկություններ և դիտողություններ:

Քննարկման արդյունքում հաստատվեց ատենախոսության վերաբերյալ հետևյալ կարծիքը.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի «Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում» թեմայով ԺԲ.00.02 («Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում») մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի «Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը նվիրված է վարչարարության համաչափության սկզբունքի համակողմանի ուսումնասիրությանը, և դրա կիրառման միասնական չափանիշների և մեթոդների մշակմանը:

Ընտրված թեմայի արդիականությունը հիմնավորված է՝ ելնելով այն հանգամանքից, որ իրավագիտության մեջ ինչպես տեսական, այնպես էլ իրավակիրառ հարթությամբ «վարչարարության համաչափության» սկզբունքը դեռևս չունի միատեսակ և միանշանակ ընկալում: Ավելին, համաչափության սկզբունքի շուրջ ձևավորված գիտական վեճերը նոր հորիզոններ են բացում ոլորտը հետազոտողների համար, ինչը ընդգծում է հարցը նոր դիտանկյուններից ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Վարչական մարմինների և դատական պրակտիկայում վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման անհրաժեշտ միասնականություն դեռևս ձևավորված չէ: Տեսական հարթությամբ ամբողջովին բացահայտված չեն այս սկզբունքի տարրերի էությունն ու բովանդակությունը, մշակված չեն դրանց հետևողական և կանխատեսելի կիրառման հիմնական չափանիշները:

Ինչպես նշում է հեղինակը, թե՛ հայրենական և՛ թե արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ վարչարարության համաչափության սկզբունքի համալիր գիտական ուսումնասիրություն չի իրականացվել: Թեմայի արդիականությունն առավել ընդգծվում է նաև այն իրողությամբ, որ ներկայացված աշխատանքը մինչ օրս կատարված միակ հայալեզու համընդգրկուն հետազոտությունն է հայրենական իրավաբանական դոկտրինում:

Ներկայացված աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլխից, որոնք ընդհանուր առմամբ ներառում են 8 պարագրաֆ, եզրակացությունից և գրականության ցանկից: Ներածությունում հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքը, նորմատիվ-իրավական և աղբյուրագիտական հիմքը, գիտագործնական նշանակությունը, արդյունքների հիմնավորվածությունը, արժանահավատությունն ու փորձարկումը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը վերլուծում է վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման պայմանները, մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում դրա և վարչարարության մյուս սկզբունքների կապն ու փոխհարաբերակցությունը:

Երկրորդ գլխում հեղինակը բացահայտել է վարչարարության համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի, պիտանիության, անհրաժեշտության և համարժեքության պահանջների բովանդակությունը, մշակել դրանց կիրառման հիմնական մեթոդներն ու չափանիշները:

Երրորդ գլխում վարչարարության համաչափության սկզբունքի հիմնական առանձնահատկություններն ուսումնասիրվել են արդի զարգացումների համատեքստում: Մասնավորապես՝ հեղինակն անդրադարձել է կառավարման

հատուկ ռեժիմի պայմաններում և ուժի կիրառման դեպքում վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման առանձնահատկություններին, բացահայտել և վերլուծել է վարչարարության համաչափության սկզբունքի գնահատման հիմնախնդիրները դատական վերանայման և վարչական բողոքարկման շրջանակներում:

Եզրակացության մեջ ամփոփվում են կատարված հետազոտության արդյունքները:

Ատենախոսության կարևոր արժանիքներից է այն, որ խորը և համակողմանի վերլուծության ենթարկվելով վարչարարության համաչափության սկզբունքի բովանդակությունն ու բաղադրիչները, հեղինակը մշակել է սկզբունքի միասնական ընկալման և կանխատեսելի կիրառման համար համարժեք գիտագործնական նշանակություն ունեցող մոտեցումներ: Այդ նպատակով օգտագործվել է լայն շրջանակներով գիտական կարծիքների, հայրենական և արտասահմանյան բավական հարուստ և մեծածավալ դատական պրակտիկայի վերլուծությունը՝ հաշվի առնելով նաև դրանցում ձևավորված հիմնական մոտեցումների զարգացումը:

Արժանիքների շարքին կարելի է դասել նաև հեղինակի այն գիտական մոտեցումը, ըստ որի՝ վարչարարության համաչափության սկզբունքը կիրառելիս վարչական մարմինը նախ պետք է ձեռնամուխ լինի օրենսդրական ակտերով հետապնդվող նպատակի ինքնուրույն բացահայտմանը: Սրանով պայմանավորված վարչարարության համաչափության սկզբունքի լեգիտիմ նպատակի ուսումնասիրության շրջանակներում հեղինակը հանգամանորեն վերլուծել և մշակել է ինչպես օրենսդրական ակտերով հետապնդվող նպատակների որոշման, այնպես էլ դրանց լեգիտիմության սահմանման որոշակի մոտեցումներ: Այս կապակցությամբ հատկապես արժեքավոր է հեղինակի համոզմունքն առ այն, որ լեգիտիմ նպատակի՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի բաղադրատարրի, առկայությունը պարզելու համար վարչական մարմինը պետք է գնահատի ինչպես օրենսդրի սուբյեկտիվ մտադրությունները, այնպես էլ օրենսդրական ակտի տեքստից բխող օբյեկտիվ նպատակը, որոնք պետք է համադրվեն և ներդաշնակեցվեն միմյանց հետ:

Հատկապես ուշագրավ են հեղինակի մոտեցումները վարչական բողոքարկման և դատական վերանայման շրջանակներում վարչական հայեցողության իրականացման համաչափության գնահատման առանձնահատկությունների շուրջ: Մասնավորապես, կարևորելով իշխանությունների բաժանման գործառութային ասպեկտը՝ հեղինակը կարևորել է այն, որ վարչական հայեցողության իրականացման համաչափությունը քննելիս դատարանը ոչ միայն չստանձնի վարչական մարմնի գործառույթները, այլ նաև նրա գնահատումները չհանգեցնեն վարչական մարմնի հայեցողական լիազորությունների անհարկի միջամտությանը՝ դրանով իսկ վերացնելով արդարադատության և գործադիր իշխանությունների միջև անհրաժեշտ սահմանագիծը: Այս գաղափարով պայմանավորված՝ հեղինակն առաջ է քաշում և հանգամանորեն վերլուծում է վարչական մարմինների ինքնուրույնության նկատմամբ «դատական հարգանքի» հայեցակարգը: Ատենախոսի կողմից «դատական հարգանքը» պայմանավորող հանգամանքների բացահայտումը, հիմնավորումն ու դասակարգումը միանգամայն նոր և ուշադրության արժանի վերլուծություն է մինչ օրս կատարված հետազոտությունների շարքում:

Աշխատանքի արժանիքներից է նաև հեղինակի կողմից առավելապես ժամանակակից եվրոպական գրականությունում առկա մոտեցումների, միջազգային դատական ատյանների և բազմաթիվ հեղինակավոր միջազգային կառույցների ու կազմակերպությունների դիրքորոշումների քննարկումը, ինչը վկայում է բարձրաձայնված հարցերի բազմաշերտ և խորքային ուսումնասիրության մասին:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունում պատշաճ խորությամբ և բազմակողմանիորեն ուսումնասիրվել և վերլուծվել են առաջադրված հարցերը, արվել են հիմնավորված հետևություններ և առաջարկություններ: Ընդհանուր առմամբ հեղինակը հասել է իր առջև դրված հետազոտական նպատակին՝ ցուցաբերելով ինքնուրույնություն իր դատողություններում և ցուցադրելով ստեղծագործական միտք:

Միաժամանակ, հետազոտությունը զերծ չէ թերություններից, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

1. Ատենախոսական հետազոտության 1-ին գլխի «Վարչարարության համաչափության սկզբունքի դերը վարչարարության սկզբունքների համակարգում»

վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը քննարկել է վարչարարության համաչափության, իրավական որոշակիության ու լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության և կամայականության արգելքի սկզբունքների կապն ու փոխհարաբերակցությունը: Պարագրաֆում հեղինակը կարևորել է, *որ եթե վարչական մարմինը համաչափության սկզբունքի բոլոր տարրերի հետևողական կիրառման արդյունքում մարդու իրավունքների սահմանափակման կոնկրետ հարցում ձևավորել է որոշակի պրակտիկա, ապա պետք է հավատարիմ մնա սեփական պրակտիկային*:

Այնուհետև աշխատանքի 2-րդ գլխի «Պիտանիությունը և անհրաժեշտությունը՝ որպես վարչարարության համաչափության սկզբունքի տարրեր» վերտառությամբ 2-րդ պարագրաֆի 66-68 էջերում ատենախոսը անդրադարձել է վարչարարության համաչափության սկզբունքի արդեն պիտանիության պահանջի, վարչական մարմնի պրակտիկայի հետևողական լինելու և կամայականության արգելքի հետ կապված հիմնահարցերին՝ եզրահանգելով, որ *[...] պիտանիության չափանիշը նաև պահանջում է, որ վարչական մարմնի կողմից որևէ սահմանափակող միջոցի կիրառումը հիմնավորվի ոչ միայն օրենքով սահմանված կոնկրետ նպատակի, այլ նաև վերջինիս պրակտիկայի համատեքստում (հեղինակի խոսքի մեջբերման ավարտ, տե՛ս աշխատանքի 81-րդ էջը)*:

Այս առումով, ներքին կառուցվածքային տրամաբանությունը պահպանելու տեսանկյունից, առավել հիմնավորված կլիներ, եթե հեղինակն այդ բոլոր հիմնահարցերը քննարկեր և ամփոփեր 1-ին գլխի 2-րդ պարագրաֆում, ինչն ավելի ամբողջական ու հաջորդական կդարձներ այդ խնդիրների վերաբերյալ եզրահանգումների կառուցումը:

2. Ատենախոսը, աշխատանքի 2-գլխի 3-րդ պարագրաֆում քննարկելով վարչարարության համաչափության սկզբունքի վերջին՝ համարժեքության տարրի էությունը, նշել է, որ *վարչական միջոցի համարժեքության որոշումը պահանջում է հավասարակշռման իրականացում:* Այնուհետև հեղինակը քննարկել է հավասարակշռման գործընթացի հիմնական բաղադրիչներն ու վիճելի ասպեկտները՝ այն ներկայացնելով բացառապես որպես համաչափության սկզբունքի համարժեքության պահանջի գնահատման մեթոդ:

Մինչդեռ, կարծում ենք, մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափության գնահատման գործում հավասարակշռման դերն այդքանով չի սահմանափակվում: Այսպես, վարչարարության համաչափության, այդ թվում՝ համարժեքության գնահատման ընթացքում հավասարակշռման գործիքը լայնորեն կիրառվում է նաև որպես մեկնաբանողական միջոց: Հետազոտությունն առավել շահեկան կլիներ, եթե անդրադարձ լիներ հավասարակշռման որպես մեկնաբանման միջոցի վերաբերյալ մոտեցումներին, հատկապես, որ հեղինակն ինքը համաչափության սկզբունքին այս ասպեկտով եզրահանգում ներկայացրել է 3-րդ գլխի 2-րդ պարագրաֆում՝ նշելով, որ *այս սկզբունքը կարող է օգտագործվել նաև արժանապատվության իրավունքի խախտումը որոշելու համար անհրաժեշտ հասկացությունները մեկնաբանելու համար*:

3. Ատենախոսության 3-րդ գլխի 2-րդ պարագրաֆում հեղինակը, անդրադառնալով ուժի կիրառման համատեքստում արժանապատվության իրավունքի և համաչափության սկզբունքի հարաբերակցության հարցին, եզրահանգել է, որ *համաչափության սկզբունքը հանդես է գալիս արժանապատվության իրավունքի խախտման փաստը որոշելու գործիք՝ հանդիսանալով արժանապատվության իրավունքի ծավալը որոշելու համար նշանակություն ունեցող հասկացությունների մեկնաբանության միջոց:* Մինչդեռ, այդ հատվածում հարկ էր անդրադառնալ ու քննարկել ոչ միայն արժանապատվության, այլ նաև բոլոր բացարձակ իրավունքների խախտման հարցը որոշելիս համաչափության սկզբունքի ունեցած դերի ու կիրառման առանձնահատկություններին: Ուժի կիրառման դեպքում արժանապատվության իրավունքը միակ բացարձակ իրավունքը չէ, որ կարող է խախտվել:

Պետք է նշել, սակայն, որ վերոնշյալ դիտողությունները բոլորովին չեն ստվերում աշխատանքի արժանիքները, մասնակի բնույթ են կրում, իսկ առանձին դեպքերում էլ բանավեճի հարթությամբ են և չեն կարող ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը կասկած չի հարուցում: Աշխատանքը շարադրված է գիտական պատշաճ մակարդակով, ունի էմպիրիկ և աղբյուրագիտական հարուստ հիմք:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարող ենք հավաստել, որ Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացրած «Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտականորեն պատշաճ հիմնավորված և գիտական նորույթ ներկայացնող եզրահանգումներ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանա-շնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Որոշեցին՝

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի **«Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, աշխատանքում առկա թերությունները էական բնույթ չեն կրում և ատենախոս Քրիստինե Սարգսի Ալեքսանյանն արժանի է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հաստատել առաջատար կազմակերպության կարծիքը:

Իրավագիտության ամբիոնի վարիչ՝ **Ա. Եզեկյան**